



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ  
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11  
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498  
info@aybschool.am  
www.aybschool.am

## Ուղեկցող նամակ

«Այբ» կրթական հիմնադրամին պատկանող «Այբ» դպրոցը փնտրում է թեկնածուներ՝ դպրոցի գործադիր տնօրենի հաստիքը զբաղեցնելու համար: Դպրոցի գործադիր տնօրենը դպրոցի բարձրագույն գործադիր պաշտոնյան է, որը գործում է դպրոցի հոգաբարձուների խորհրդի (Հխ) անմիջական ենթակայությամբ: Հխ-ի հանձնարարականով թեկնածուների որոնմամբ զբաղվում է գործադիր տնօրեն ընտրելու համար ձևավորված ընտրական հանձնաժողովը: Ընտրական գործընթացը մեկնարկել է 2020 թ. փետրվարի 10-ին: Թեկնածուների դիմումների ընդունման վերջնաժամկետը 2020 թ. ապրիլի 20-ն է: Ընտրությանը մասնակցելու համար անհրաժեշտ է ինքնակենսագրությունը (CV) ուղարկել [principal\\_selection@aybschool.am](mailto:principal_selection@aybschool.am) հասցեին՝ նամակի վերնագրում նշելով «Principal selection\_անուն, ազգանուն»:

«Այբ» դպրոցը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը գործում է 2011 թվականից և Հայաստանի կրթական համակարգում ունի կարևոր դերակատարում: Նրա նպատակը 21-րդ դարի հայկական կրթական հաստատության օրինակելի մոդել դառնալն է, առաքելությունը՝ իրենց ժառանգությամբ ու ինքնությամբ հպարտ, գրագետ, ազնիվ և պատասխանատու աշակերտների ապագա սերունդներ տալը: Դպրոցի կրթական փիլիսոփայությունը հիմնված է «Այբ» դպրոցի աշակերտին ձևավորող 8 սկզբունքների վրա: Դպրոցը հպարտ է, որ ապահովում է ուսումնառության դրական միջավայր, որտեղ բարգավաճում է աշակերտներից, ուսուցիչներից ու դպրոցի մնացյալ անձնակազմից, շրջանավարտներից և ծնողներից կազմված «Այբ» համայնքը: «Այբ» դպրոցը մի ինքնատիպ լաբորատորիա է, որտեղ ստեղծվում են դասավանդման նորարար տեխնոլոգիաներ, մեթոդներ ու կրթական մոդելներ: Դպրոցը նպատակ ունի տարածելու այս ամենը երկրի կրթական ամբողջ համակարգում՝ վերջինիս մակարդակը հասցնելով համաշխարհային մրցունակ ստանդարտին:

«Այբ» դպրոցական ավանդ գտնվում է Երևանի Արաբկիր վարչական շրջանում և զբաղեցնում 6,95 հա տարածք: Դպրոցի տարրական, միջին և ավագ բաժինները գործում են երեք առանձին շինություններում, որոնց ընդհանուր մակերեսը 7000 մ<sup>2</sup> է, և որոնք զինված են ուսումնառությանը նպաստող ժամանակակից կրթական հարմարություններով: Դպրոցում սովորող աշակերտների թիվը 500-ից մի փոքր պակաս է, իսկ անձնակազմի անդամների թիվը՝ 160-ից ավելի: Դպրոցը ղեկավարվում է Հխ-ի կողմից և չունի սեփականատերեր կամ բաժնետերեր: «Այբ» ավագ դպրոցը Հայաստանի ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է. ավագ դպրոցի աշակերտների 70 տոկոսից ավելին ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում): Դպրոցի մասին հավելյալ տեղեկություններ կարող եք ստանալ այստեղ՝ <https://aybschool.am>:

Գործադիր տնօրենի պաշտոնի թեկնածուներին անհրաժեշտ մնացած տվյալները ներկայացված են այս նամակին կից երկու փաստաթղթերում՝ «Աշխատանքի նկարագրություն» և «Անձնային պահանջներ»:

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ 2/2 Ընտրական հանձնաժողովի անդամների հետ առցանց կամ դեմառդեմ հարցազրույցներին մասնակցելիք թեկնածուների ընդարձակ ցուցակը կկազմվի

դիմումների ընդունման վերջնաժամկետից հետո: Հարցազրույցների հիման վրա կկազմվի կարճ ցուցակ, որում ընդգրկված թեկնածուները կիրավիրվեն Երևան՝ դեմառդեմ հանդիպումների և հարցազրույցների: Այս հանդիպումների արդյունքում էլ կընտրվի և կհայտարարվի վերջնական թեկնածուն: Ակնկալվում է, որ ՀԽ-ն վերջնական որոշումը կկայացնի մինչև 2020 թ. մայիսի 22-ը:

Ընտրական հանձնաժողովը ցանկացած ժամանակ կարող է որոշել դադարեցնել թեկնածուների հավաքագրումը, վերանայել ժամկետները կամ թեկնածուի որոնման համար դիմել արտաքին կազմակերպության ծառայությանը՝ ընտրական հանձնաժողովի հետ համագործակցությամբ: Եթե գործընթացում այսպիսի կազմակերպություն ներգրավվի, ընտրական հանձնաժողովը կարող է նախքան այդ ընդունած բոլոր դիմումները փոխանցել այդ կազմակերպությանը հետագա գործողությունների համար: